ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> դեկտեմբերի 2012թ. N 558

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ <<ԱՐՄԱՎԻՐ-ՄՅԱՍՆԻԿՅԱՆ>> ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ, հիմք ընդունելով <<Յուարմի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի գրությունը.

որոշում եմ՝

1. Դադարեցնել <<Յուարմի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության <<Արմավիր-Մյասնիկյան>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը:
2. <<Արմավիր-Մյասնիկյան>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը ժամանակավորապես թույլատրել իրականացնել <<Յուարմի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային <<Արմավիր-Մյասնիկյան>> միկրոավտոբուսային երթուղու մրցույթ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***